

## ԺՈՂՈՎԴԴԱՆՈՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՈՒՍԵՐՏԵՐԸ ՀՐ. ՄԱՔԵՎՈՍՅԱՆԻ «ԾԱՌԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄ

Ս. Ս. ԶՈՒՍԱՇՅԱՆ

Հր. Մաթևոսյանը 60—80-ական թվականների հայ արձակի էջերում նոր ուղղություն էր բացում, բերում բովանդակության, ձևի և լեզվաոճական իրական պատկերների նոր վերլուծությունների ու նկարագրություններ, գեղարվեստական խոսքը կառուցում լեզվական նյութի գործածության նորանոր առանձնահատկություններով:

60—80-ական թվականներին գրական ստեղծագործություններում շարունակվում էին անցյալ դարից եկող ավանդույթները, որոշ գրական երկերում պահպանվում էր բարբառայնությունը՝ ոճական նպատակներով:

Նորագույն արձակի բնորոշ առանձնահատկություններից է ժողովրդայնությունը, քնակաճանությունը և խոսքի սեղմությունը: Այս իմաստով էլ հետաքրքիր է Հրանտ Մաթևոսյանի «Ծառերը» ժողովածուի բառապաշարի և դրանց ոճական առանձնահատկությունների քննությունը:

Բարդ է Հր. Մաթևոսյանի արձակը: Արտաբուստ բվում է՝ Մաթևոսյանը շարունակում է հայ գրականության համար ավանդական գյուղի քեման: Մակայն նոր է ասելիքը գյուղի մասին. նոր է նրա ոճը: «Հենց առաջին ստեղծագործություններում աչքի են ընկնում հեղինակի յուրահատուկ մտածելակերպը և ոճի ինքնատիպությունը»<sup>1</sup>:

Հեղինակի ոճի ինքնատիպությունը պայմանավորված է ոչ այնքան գրելաձևով ու գրական հնարանքների ինքնատիպ ու անկրկնելի արտահայտություններով, որքան գեղարվեստական ճշմարտությամբ, որ հանձնին Մաթևոսյանի գտնում է իր անվերապահ ու ուժեղ մարմնացնողին: «Գրողը գյուղական կյանքի մեջ տեսնում է ուրույն էվոյուցիա, նկատում գյուղացու, հասարակ մարդու վերցրած հոգսի ծանրությունը և հոգեկան-բարոյական աշխարհի բարդացումը, մտավոր աշխարհի ներքին շարժումը՝ կապված ընդհանուր կյանքի երևույթների հետ»<sup>2</sup>, — գրում է Հր. Թամրազյանը:

Հր. Մաթևոսյանի «Ծառերը» ժողովածուն լույս է տեսել 1978 թ.: Այն ամփոփում է հետևյալ վիպակները՝ «Կենդանին և մեռյալը», «Գոմեշը», «Մեսրոպը», «Աշման արև», «Սկիզբը», «Մեծամոր» և «Ծառերը»:

Յուրաքանչյուր երկի ոճական արժեքը գնահատելիս ամենից առաջ կարևոր է բառապաշարի քննությունը: Լեզվի բառապաշարը տարածամանակյա դիտակետով ընդունված է դասակարգել հետևյալ շերտերի՝ համահայկական, համագրական, գրաբարյան, միջինհայերենյան, աշխարհաբարյան, նոր գրական, մասնավոր գրական, բարբառային և այլն: Բառապաշարը կարելի է դասակարգել նաև համածամանակյա սկզբունքով: Տվյալ դեպքում առաջնորդվելով բառագործածության արդի չափանիշներով՝ հիմք են ընդունվում բառերի բնութագրության տարբեր դասերումները: Բառապաշարը դասակարգվում է ըստ գործածության, սոցիալական տարբերակումների, գործառնության ոլորտների և ներլեզվական հարաբերությունների:

Ըստ գործածականության՝ գրական լեզվի ամբողջ բառապաշարն ընդունված է բաժանել երկու՝ գործուն և ոչ գործուն բառաշերտերի: Մրանք էլ կազմում են լեզվի ողջ բառապաշարի **փոքրկային** շերտը, որ կոչվում է **չեզոք** կամ **համագործածական**: Ըստ էդ. Աղայանի՝ բառապաշարի այս չեզոք շերտի բառերն են, որ կազմում են ամեն մի լեզվի բառազանձի հիմքը<sup>3</sup>:

<sup>1</sup> Լ. Եզնկյան, Հր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, 1986, էջ 5:

<sup>2</sup> Հր. Թամրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, 1998, էջ 131:

<sup>3</sup> Տես էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1987, էջ 119—139:

«Ծառերը» ժողովածուի բառապաշարը քննել ենք՝ նկատի ունենալով բառերի գործածության տարրերը շերտերը, ըստ այդմ էլ բառապաշարը ներկայացնում ենք հետևյալ խմբերով՝ գրական բառեր, ժողովրդախոսակցական բառեր, բարբառային բառեր, հնարանություններ և նորարանություններ:

Գրողի լեզվի և ոճի համակողմանի ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է դառնում պարզել լեզվի տվյալ փուլի, տվյալ ժամանակահատվածի իրական պատկերը, ցույց տալ քերականական օրինաչափությունները, բացահայտել զարգացման միտումները:

«Ծառերը» ժողովածուի բառապաշարի հիմնական շերտը գրականն է, որը հարուստ է գրական բառաշերտի չեզոք ու ռճական ձևերով: «Չեզոք բառապաշարը այն կենտրոնն է, որից ելնելով՝ հնարավոր է որոշել բառերի խմբավորումները ռճակնորեն դրական գունավորման տեսակետից»<sup>4</sup>: Քանի որ այդ կարգի բառերը առարկաների, երևույթների, հատկանիշների անվանումներն են, ուստի հիմնականում արտահայտում են բառերի ուղղակի կամ անվանական և հետագայում ձեռք բերած փոխաբերական այն իմաստները, որոնք ռճական կամ հուզաարտահայտչական տեսակետից գործածության որևէ սահմանափակում չունեն: Այսինքն՝ «բառապաշարի յուրաքանչյուր շերտում բառի ռճական արժեքը կիրառության հետևանք է»<sup>5</sup>: Օրինակ՝ «Ամտառն ինչպես է առաջ գնում, թփերն առջևն է գցում, թփերը գնում են, ինքը գնում է թփերի ետևից: Կապուտեղ սարի մերկ լանջին գիհի մի թուփ է կպել ու վերև է կանչում ձորի ամտառին»: Կամ՝ «Հեռու ծովերի երկնքում ամպերը բացում են իրենց թևերը և ճանապարհ են ընկնում գալու, անձրևելու մեր ձորում, մեր անտառի վրա»<sup>6</sup>:

Ահա այդ համագործածական բառաշերտի՝ չեզոք կոչված խմբի բառերի մի քանի գործածություններ, որտեղ դժվար չէ նկատել, թե ինչպես իմաստային այլևայլ առումներով օգտագործված («թփերը գնում են», «կանչում է ձորի ամտառին», «ծովերի երկնքում», «ամտառ», «ամպ», «սար», «թուփ» և այլն) բառեր ու բառակապակցություններ, շնչավորելով առարկաներն ու երևույթները, օժտվել են հուզականությամբ, արտահայտչական նրբին երանգներով:

Բերենք մի քանի բառերի գործածության օրինակներ, որոնք, ինքնին վերցված, թվում է, ռճական որևէ արտահայտչականությամբ օժտված չեն, բայց փոխաբերական գործածության շնորհիվ հեղինակի խոսքում հանդես են գալիս որպես արտահայտչական միավորներ: «Արևածաղիկները մայրն են պայծառ, պայծառ: Թարուն մի բան, արգելված մի բան անելիս էին եղել, ծերունու ոտնաձայնի վրա շտկվել էին, մայրն են ու լուռ... Եթե կոռունկը երան է կապում ու իր կառավար թագուհուն գցում առջևը, եթե զամբիկն արածում է ու արածելու հետ քաքկանում է հեռացող քուտակի վրա և քուտակը հասկանում է՝ ուրեմն այս երկնքի տակ Աստուծաւ ամեն արարած էլ ունի մարդկային իր լեզուն» (227): Այնուհայտ է ընդգծված բառերի դերը՝ խոսքում համապատասխան տրամադրությունն ուժեղացնելու, նկարագրությունը կատարելապես գեղարվեստական, կենդանի ու ինքնատիպ դարձնելու համար:

Բանաստեղծական այսպիսի շնչով է գրված «Գոռնշը» պատմվածքը. «Սարի գլխին մի կտոր սպիտակ սառույց կար, սառույցի վերևը խանձարառի կապերը լուռ քանդում էր մի փոքրիկ ամպ: Ամպի տակ հրճվում էր արտուտիկը, իսկ ամպի վրայով բազեի, սարերի, արտերի ու անտառների վրայով ուրիշ աշխարհների մաքուր քամիները հուրհուրվով տանում էին մի մեծ արև» (157):

Բերված օրինակներում կարևոր նշանակություն ունի խոսքի բովանդակային կողմը: Այս բառերը համատեքստում օգտագործվում են երևույթի էությունը խորքով ներկայացնելու, անհրաժեշտ նրբերանգներով ու պատկերավորությամբ արտահայտելու, իմաստային ընդհանրացումներ անելու համար: Բերված «արև», «արտ», «ամպ», «սար» և սրանց կողքին՝ «խանձարուր», «թագուհի», «երկինք», «Աստված» և նման բառերի միջոցով գրողը տալիս է իր համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող խնդիրների գեղարվեստական լուծումներ, որն էլ մեզ հնարավորություն է ընձեռնում եզրակացնել, որ հեղինակն ընդհանուր գործածական, ամենատարակյալ, չեզոք շերտի բառերն ու արտահայտությունները միաձուլել ու դարձրել է իր երկերի բառապաշարի հիմքը:

<sup>4</sup> Ա. Մաքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 189:

<sup>5</sup> Ս. Մեչյունյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 91:

<sup>6</sup> Տե՛ս Հ. Մաքևոսյան, Ծառերը, Երևան, 1978, էջ 224: Այսուհետ շարադրանքում կնշենք օրինակների միայն էջերը:

Հատկանշական է, որ համագործածական բառաշերտում առատ գործածություն ունեն ժողովրդախոսակցական բառերն ու բառաձևերը:

«Ժողովրդախոսակցական բառաշերտի համար բնորոշ է հուզաարտահայտչական երանգավորում ունեցող բառերի առատությունը, որոնք խոսքին հաղորդում են բարձր ու հարուստ ժողովրդական կենդանի լեզվի ու մտածողության երանգ, հանդիսանում են համաժողովրդական լեզվի խոսակցական ոլորտի հիմքը՝ ակնակունքը»<sup>7</sup>:

Հր. Մաթևոսյանը ժողովրդախոսակցական բառերի գործածությամբ անհատականացնում է հերոսների խոսքը, բացահայտում նրանց էությունն ու մտածողությունը:

Արձակագրի բազմակողմանի տաղանդը գտնում է իր հերոսուհուն («Աշնան արև») պատկերավոր ու յուրովի ներկայացնելու միջոցներն ու ձևերը: Պատմվածքում իր խոսքի դիպուկությամբ ու ճշմարտությունը մարդկանց երեսին ասելու իրավունքով առանձնանում է Աղունը: Նա երևան է գնում որդուն ամուսնացնելու նպատակով: Գնալուց առաջ մտաբերում է իր ողջ անցյալը՝ մեծ տառապանքներով ու փոքր ուրախություններով ապրած մի կյանք:

Կյանքը ապրելով են հասնում ճշմարտության: Կենսափոխիտփայության այս սկզբունքով է առաջնորդվում վերոհիշյալ վիպակի հերոսուհին: Նա իր խորհրդածություններն ու խոսքը սովորաբար սահմանափակում է ժողովրդախոսակցական տարրերով, բարբառային ձևերով ու դարձվածքներով, հետաքրքիր առած-ասացվածքներով: Աղունի անհանգիստ հոգեվիճակի արտահայտությունն է հետևյալ հատվածի բովանդակությունը.

«— Արո՛ւս ջան, գնում են մեծիս տնավորեմ,— պատմում է Աղունը» (368): Այնուհետև ժողովրդախոսակցական պարզ ու անպաճույճ ճոճվ հերոսուհին շարունակում է. «Հոնորարը, Արո՛ւս ջան, է՛մ է, որ ստանում են տպելու համար: Իրենք խեղճ չեն, բայց մեր ձեռն էլ չոր քարի տակին չի, իմ ունեցածից տալիս են էս դառուրմա-մառուրման, խնձոր-մնձորը, հինգ հարյուր հատ ձու-մու՛ս՝ զոռ, դրանք մեր օրվա պարտքն են, դու՛ քո տղերքին, ես՛ իմին: ... Զոնոնք գուցե վաճելի ծանր լինեին...» (369):

Արուն էլ պատասխանում է նույն ոճով.

«— Այչի՛, դու հո խելագար չե՞ս,— շփոթվեց Արունը: ... Այչի՛, սա հարսիդ հեթն էլ բաղեմ, տղիդ հեթն էլ անիծեմ, այչի՛ դու էս տունը սրբած տանում ես ո՞ւմ համար» (371):

Տպավորիչ է պատմվածքում Սիմոնի կերպարը, որին ավելի շատ ներկայացնում է Աղունը՝ իր դիպուկ ու սրամիտ խոսքերով. ... Իրենց դռանը՝ իրիկամուտի մեջ, կանգնել էին երկու տղա. մեկը շարմաղ էր, ճակատը՝ բարձր, ու վիզը՝ երկար, մյուսը սև էր ու մեծագլուխ: ... «Մեծագլուխը Սիմոնն էր. գլուխն ուսին դրած՝ կանգնել էր» (344): Որպեսզի ասի թե ինչքան և ինչպես է աշխատում Սիմոնը, Աղունը մեկ նախադասությամբ տալիս է դրա պատասխանը. «... Սիմոնի պես փետ կրծելով չի քերում զրամ-զրամ» (341): Կամ «Վայ է՛մ ոտքին, որ չհասկացող գլխի ձեռք է ընկել» (347):

Երբեմն հեղինակը ռճավորում է հերոսի խոսքը՝ ընդհատելով նրա մտքերը, բայց կարծես միաժամանակ ամբողջականացնելով նրանց էությունն ու մտածելակերպը: Մա նույնպես ռճական արտահայտություն է, որ տարբեր առիթներով, երբեմն՝ նույնիսկ չափից ավելի է օգտագործում հեղինակը: Օրինակ՝ «Իմ չի՞» էր դուրս եկել. (խոսքը Աղունի մասին է— Ս. Զ.), հա՛, գնում է Երևան, երեխային ուղարկել է՝ ձիուն նայելու... Դուրս եկավ՝ աշնան արև աշխարհը ցերմանում էր. լուռ տեղև էր թափում դիմացի անտառը, տանձենիները բոց էին կտրել, տաքդեղի շարունակ կեծանում էր, շունը փաթաթվել էր ինքն իր մեջ ու նիհիում էր» (360): Կամ «Կրակը հանգել էր, ինքը գնաց, Է՛, Մուրադենցից կրակ քերելու» (351):

Հեղինակային նկարագրություններում օգտագործվում են ժողորդական սովորույթներ, նրա իմաստությունը հղկված դիպուկ արտահայտություններ: Դրա վառ արտահայտությունն է հետևյալ պատկերը. «Չեղուն բարձրանալիս սանդուղքների վրայից նա նայեց. տանձենու մտ Սիմոնը գալիս էր՝ ձին քաշելով դանդաղ ու Մուրադենց տղերքի պես ծնկները ծալվելով: Բայց սիրտ չկար բարկանալու: Աշխարհը տխուր, տխուր էր» (345): Կամ «Միրաներս հոգնեց բարտալուց, էլ չի խփում: Աքաղաղը կանչում էր լուսամտի տակ՝ ասում էինք՝ հյուր է գալու: Աշխարհը գալիս ու գնում է, իսկ մենք պինդ ցեղ ենք, կանք: ... Չեք գտնվում ինչպես մեռնելու ձևը: Լավերը շուտ են մեռնում, իսկ վատերը տնքտնքում են ու չեն մեռնում» (345—382):

<sup>7</sup> Ս. Էրզրան, Ժամանակակից հայերենի բառային ռճաբանություն, Երևան, 1989, էջ 85:

Այստեղ ևս կերպարի մտածողությունը, դատողությունները համապատասխան լեզվական արտահայտություն են ստանում՝ շնորհիվ առանձին բառերի ու բառակապակցությունների, առանձնեքի ու ասացվածքների գործածության, որոնք անհատականացնում ու ոճավորում են հերոսների լեզուն: Ժողովրդախոսակցական լեզուն ունի դարերով ձեռքբերված արտահայտչական հարուստ հնարավորություններ, հուզական ընդգծված երանգ, կենդանություն ու անմիջականություն, ազգային լեզվամտածողության ամաղարտ ձևեր:

Այս բառաշերտի մեջ առանձին խումբ են կազմում հարադրավոր բարդությունները, որոնք լեզվի ժողովրդայնությունն ապահովող անհրաժեշտ ու կարևոր միջոցներ են: Դրանք ունեն տարբեր կազմություններ (անվանական և բայական): Ժամանակակից հայերենի բաղադրությունները բազմազան են թե իրենց կազմության եղանակով ու միջոցներով, թե իրենց կառուցվածքով:

«Ծառերը» ժողովածուում ոճական տարբեր երանգավորումներով գործածվում են հիմնականում անվանական, մասամբ նաև բայական հարադրությունները: Օրինակ՝ «Մայրն իր գործերով **ճեքա ու դուրս** է անում» (75): «... Լույսի տակ տղերքը ջարդվածի պես թափվել էին, չսփռված. կնճիռ-կնճիռ. **ճաղատ-կիսաճաղատ**» (402), «Արթնացավ, լսեց, որ մեկը **տաք ու լուս քորում** է շատ մոտիկ» (422): «Եվ վիզը ծած քո պապ Ավետիքը դուրս կգա իմ հոր առջև և բերանում **խտսելու-խմորվելու** լեզու չի ունենա» (45), «Կանգնեց. ձեռքերը գրպանները առավ, նայեց որիչ կողմ և դարձավ գլուղից իր համար **եկող-անցնող**» (280), «**Տարան-զմացին** ու հիմա լուս ձորն է. կարծես երազում եղած լինի» (453) և այլն:

Հարադրական բարդությունների մի տեսակն է քաղիյուսական հարադրությունը: Մովորական հարադրությունից այն տարբերվում է նրանով, որ հարադրվող տարրերը՝ բաղադրիչները, իրար նկատմամբ համագոր են և հաճախ համադաս, կապակցվում են **ու** կամ **և** շաղկապով<sup>8</sup>: Մրանց ընդհանուր իմաստը հիմնականում բխում է բաղադրիչների բառական իմաստներից: Որոշ դեպքերում բարդությունը ստանում է նաև աստկական իմաստ:

Վերոհիշյալ ժողովածուում շատ են հանդիպում իմաստային որոշ ընդհանրություն ունեցող բառերի հարադրությամբ կազմվող բաղիյուսական հարադրություններ: Ինչպես օրինակ՝ «**Ձուգված-զարդարված** պառավը թիուն լավաշ էր դնում» (227): «Հարկավոր է գնալ **եղանով-մահակով** վախեցնել սրապոզ տեղականին» (195): «**Տխուր-տրտում** մի քիչ մնաց տանն ու հեռացավ մեռնելու թաքուն մի տեղ» (170): «Դա միայն **հանգչելու-հատնելու** ցանկություն էր» (172):

Հարադրվող համադաս և համագոր բառերն իրար նկատմամբ ունեն իմաստային որոշակի, երբեմն հեռավոր առնչություն, բաղադրության մեջ չեն պահպանում իրենց ինքնուրույն, անկախ իմաստները և իբրև բառական միություն՝ ստանում են մի նոր, հաճախ հավաքական իմաստ: Օրինակ՝ «**Լիարեքան-լիաթոք** չի ծիծաղում» (436): «**Կերած-խմած** նրա մարմինը ձին գոռով էր տանում» (457): «**Կանաչ-կարմիր** է կապել ծիածանը» (324): «**Բույր ու լույս** աշխարհը մագաղաթին խամրում էր Ծ տառի չափ մի տեղ» (314):

Օգտագործված են նաև՝ **զիչեր-ցեքեկ, մանր-անվնաս, շունչ-արարած, արև-տատված, մաքր-ստտված, արև-տառամամիք, ռոմում-նվում, գուռով-դեղով, օր ու զիչեր** և այլն:

Հանդիպում են նաև իրար հաջորդող թվականների հարադրությամբ կազմվող բաղիյուսական հարադրական բարդություններ: Օրինակ՝ «Մի **տասնհինգ-քսամ** լիտր զինի էին ուղարկել» (132): «**Հիսունհինգ-վաթսամ** տարեկան մարդ է» (25): «**Տասնմեկ-տասներկու** տարեկան տղան տուն չի մտնում...» (74):

Ժողովրդախոսակցական բառապաշարի մեջ են մտնում նաև կրկնավոր հարադրական բարդությունները, որոնց միջոցով հեղինակի և հերոսների խոսքերը դառնում են արտահայտիչ, իսկ պատկերվող երևույթը՝ ավելի շոշափելի և իրական: Կրկնավորները լայն կիրառություն ունեն արձակի լեզվի բառապաշարի համակարգում:

Կրկնավոր հարադրական բարդություն կազմվում է հայերենի բոլոր խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ, որոնց բոլոր դրսևորումներն էլ կան հեղինակի խոսքում:

1. Գոյականների կրկնությամբ կազմվում են ածականներ և մակբայներ: «Ծառերը» ժողովածուում շատ են հանդիպում այս կարգի կրկնավորներ, որոնք արտահայտում են զանազանություն, բազմակիության իմաստներ. ինչպես օրինակ՝ «Խոր լուռության մեջ խոտերը **թել-թել** շղարշե բուրմուռք էին հյուսում» (158): «Աշխարհը **կտոր-կտոր** եղավ ու հալվեց» (170): «Մեկ էլ

<sup>8</sup> Տե՛ս Ա. Մաքիսայան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 187, Ա. Մաքաչյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 91:

նրանց ոչխարն էր կուտասկ-կուտասկ գալիս աղաքարերի վրա» (191): «**Բուռ-բուռ** ստանում է, **բուռ-բուռ** էլ ծախսում» (337): Օգտագործված են նաև՝ **ձեռաց-ձեռաց**, **ամտատով-անտատով**, **տմնը-տմնը**, **հիվանդ-հիվանդ**, **տախտակ-տախտակի**, **խքձաչափ-խքձաչափ**, **քայլ-քայլ** և այլն:

2. Ածականների և մակբայների կրկնությամբ սաստկանում է բառի իմաստը: Այս կրկնավորները հանդիպում են հատկապես «Գոմեշը» պատմվածքում: Դրանք ստանում են բազմակիտոբյան նշանակություն և ցույց են տալիս գործողության կրկնություն: Օրինակ՝ «Ետ դրեց ոտը և **բայլ-բայլ** բացեց կաթի երակները» (185): «Նա լծի տակից մայեց **խեղճ-խեղճ**» (167): «Հասկերը կեցած էին **ուղիղ-ուղիղ**, ոչ մեկը ոչ մեկի արևը չէր խլում» (160): «Սրանք բոլորը **սյինդ-սյինդ** գլուղացի են» (58): «**Կամաց-կամաց** կխոսենք ձևի մասին» (112): «**Նոր-մոր** գիտնական չի դառնալու» (331): «**Կատը-դատը** ասաց Աղունը» (360): Նկատելի է, որ որոշ կրկնավորներ բայական հարադրությունների բաղադրիչներ են. «Գոմեշն իր տեղից **ես-ես** արեց» (162): «Գոմեշը **պտույտ-պտույտ** արեց ու նստեց վրանների արանքում» (182): «**Սողալով-սողալով**, **նստատոբ-նստատոբ** ինքն եկավ քար դնելու ակների տակ» (399):

3. Թվականների, դերանունների կրկնությամբ կազմվող կրկնավորները ստանում են բազմակիտոբյան, ինչպես նաև բաշխական նշանակություն: Ինչպես՝ «Նրանք պիտի ծնեին **հինգ-հինգ** երեխա» (22): «Գնանք խմենք **մի-մի** բաժակ» (45): «... **Հարյուրհիսուն-հարյուրհիսուն**՝ կոնյակ նարնջի հյութի հետ» (232): «Սիմոնը սկսեց հաշվել **մեկ-մեկ**, դանդաղ, **հարյուր-հարյուր** առանձնացնելով» (402):

Գրաբարյան, հատկապես **առ** նախդիրով կազմված ձևեր. «Չորը լցվում էր գիշերով, խառը խիտ աղմուկը պատուկեց ու ցանցառացավ և ապա մաշվում էր **թել առ թել**» (176): «Նա նրան մոտեցավ **քայլ առ քայլ**» (186): «Հասկը հավաքում են **հատիկի առ հատիկի**» (122): «Գոմեշի ջղերը **համակարգ առ համակարգ** կաթվածահար էին լինում» (178):

Կրկնավոր հարադիր բարդություններ, որոնցում հնչյունափոխվում կամ հնչյունի կորուստ է կրում կրկնվող բաղադրիչներից մեկը կամ էլ բաղադրիչների միջև առաջանում է հավելյալ հընչյուն: Ընդարձակվում է այս կրկնավորների քառային իմաստը, քառը ձեռք է բերում հավաքական, բազմակիտոբյան ավելի լայն նշանակություն:

Կրկնավոր բարդություն՝ երկրորդ բաղադրիչի քառասկզբի բաղաձայնի փոփոխմամբ. ինչպես օրինակ՝ «Արայիկը եկել նստել էր ծառի տակ և **պարապ-աարապ** գրել...» (230): «Կլկլացրին բուրբի պես քաղցրացնելով ու **խուճուճ-մուճուճ** Սահակենց մեծաքերանն ու Մարտիրոսի տղան» (262): «Էլ այքիս **վրա-մրա** չկա» (276): «... Որդու ապրուստի մեջ **առտը-փառտը** նստած կար» (248):

Ոճավորման համար կարևոր դեր են խաղում դարձվածքային միավորները: Դրանք ժողովրդական ծագում ունեն, ուստի շատ են գործածվում այս ստեղծագործություններում: Դարձվածքները բացահայտում են հերոսներից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը:

«Աշնան արև» պատմվածքում Աղունի խոսքի ոճավորմանը նպաստում են նրա մտածողությանը համապատասխան նոր ու ինքնատիպ դարձվածքները, որոնց մեջ էլ դրևևորվում են հեղինակային ոճի առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ «Նրա **այքը ծանր** է, որսի գնացողները, եթե նրան տեսնում են, լուռ ետ են դառնում» (342): «**Աստծո անեծքը** սև ամպի նման **զլ-խիճ**», «**Ինձ ձեռքները պարապ ետ չդրկես**» (248): «**Ինքը մեղկացավ մորից մերկ** և տաքացրեց իրենով» (356): «**Քո դռնից էիր այքիդ գոռ անում**. որ տեսնես աջո՞ղ է խփում. թե անաջող: Ու ասում էիր՝ երեխիս կերար. **երեխիս հոգին կերար**» (357): «Ու **գիծ առ գիծ պառապեց** Աղունը» (359): Հատկապես հետաքրքիր են վերջին երկու դարձվածքների կիրառությունները, որոնք նկարագրում են Աղունի տառապած կյանքի անցած օրերը:

Ժողովրդային երանգավորումով բազմաթիվ նման էջեր կան Հր. Մաթևոսյանի արձակում: Նա նկարագրում է ժամանակակից գյուղը. նուրբ հումորով, սովորական բանի մասին պատմելիս զգացվում է ոգևորություն, ժողովրդական համ ու հոտ է բուրում արտահայտչաձև երից:

Ուշադրություն դարձնենք հետևյալ հատվածի վրա, որտեղ ժողովրդայինտասակցական, քարբառային խոսքի տարրերը վճռական դեր են կատարում: Ստեղծվում է մի գողտրիկ պատկեր, որն էլ հիշեցնում է Հովի. Թումանյանի ոճը: «Քո այդ բազմազան քաղաք Մոսկվայում մի նեղացիր մեր ծանրոցի անշնորհությունից, քանի որ մայրդ այստեղ չի, և ինչ-որ կա, ես եմ իբր թե դասավորել շտապ, քանի որ **Վարդը ավտոյով** գնում է Հովիտ, և նրա հետ ուղարկելու եմ փոստ, ես ինքս չկարողանալու **պատճառով**, քանի որ անասունը գոմում չեմ կարող թողնել առանց հսկողության, իսկ

մայրոջ գնացել է **հորանց**, նաև մի քիչ հիվանդ է: Էս գուլպան մայրոջ է եկողի հետ ուղարկել հիվանդանոց: Խմուղների հետ գործ չունես, ամոթ է, որ այդ հասակիդ **կափ-քանի** մեջ ընկնես:

Մեր բռնակը կամ աշխատավարձը դեռ չի եկել, ուզում էի՝ քեզ համար մի քիչ փող ուղարկել, փողդ տուր ուտելիքի: **Քեզ մրսեցնես ոչ**: Միմո՛ն: Որ փող ուղարկես, ինձ համար մի հատ ակամբաժվոր գլխարկ ուղարկիր, ակամբցներս սառչում են: Հաջողությո՛ւն: **Քո** դեկավարության հետ **լավ կաց**» (120): Ակնհայտ է, որ այս հատվածը հիշեցնում է Համբոյի նամակը Գիքորիին:

Ժողովրդախոսակցական բառաշերտի մի մասն են կազմում բարբառային բառերն ու քերականական ձևերը, որոնք հեղինակն օգտագործում է հիմնականում հերոսների խոսքում: Ինչպես գիտենք, ժողովրդախոսակցական լեզվի բառերն ու ձևերն ավելի շատ են գործածվում, իսկ բարբառային բառերը սահմանափակ կիրառություն ունեն: Բարբառային բառերի ու նշանակությունների ոճական կիրառությունը պայմանավորված է նաև նրանով, որ սրանք նպաստում են անհատական հերոսների խոսքի բացասական, երգիծական նաև հուզական վերաբերմունքի արտահայտմանը: «Կենդանին և մեռյալը» վիպակից բերենք մի քանի օրինակներ: Հեղինակը «չափալախ» բարբառային բառի կրկնությամբ կարողանում է հուզական երանգավորում տալ պատմվածքին: Հր. Մաթևոսյանը գրեթե ոչինչ չի ասում ծերունու մասին, քայց ակնարկից հասկանում ենք, թե ինչի մասին է խոսքը: «Նա սիրիքի է: ... Մի **չափալախով**, միանգամից գյուղապետին սպանել է, և հիմա նա սիրիքի է...» (7): Կամ՝ «Մեծ իմաստ չդրեցին պապի **չափալախի** մեջ, քայց և թույլ չտվեցին պապին համարել սուկ մարդասպան» (54): Պապը դառնում է այդ ժամանակաշրջանի գոհը:

Բարբառային բառերի գործածությամբ հեղինակը ներկայացնում է նաև իր հերոսների մտածելակերպը: Օրինակ՝ «Խոզարած Նիկոլ պապը մի իրիկուն եկավ,— էկել եմ ձեր տունը **շնատերեքեմ**, **այրա**, էս ինչ լավ տուն ունեք... էս **գոլաքին** ձեզ **հմար** եմ շինել, ճաշ կուտեք, **այրա**... **Վախեք** ոչ աման էլ **կապքեմ**, գործիս անունն ինչ է» (355): Կամ՝ «Շշի բերանը նա **խցեց** ու ասաց՝ ոչ» (51): Հեղինակի խոսքում էլ կան բարբառային ձևեր, դա նույնպես ոճական միջոց է, այդ դեպքում հեղինակը նկարագրում է իր հերոսին և ավելի շատ խոսում նրա անունից: Օրինակ՝ «Միմունը **ճղատվում** էր կլոխոզի գործի և տան արանքում», «Աշխարհը լավ է, մարդիկ վատ են. սողաբանից գողացան տախտակի կեսը, լուռ վեճ եղավ... Միմունն ուզում էր **մաքալաների** համար սղոցել»:

Առհասարակ Հր. Մաթևոսյանի լեզվում փոքր տոկոս են կազմում բարբառային բառերն ու քերականական լեզվատարրերը: Սրանք թեև քիչ են, քայց հատուկ են առանձին հերոսների լեզվին: Այդպիսիք են՝ **օրվան**, **բվեր**, **ախպեր**, **տվավ**, **տղեքը**, **փազ**, **խցեց**, **կնիկ**, **մաղյամ** (մատակ), **ուրկից**, **իքա**, **երեկ** և այլն: Առկա են նաև ժողովրդային մտածողության այլ կարգի արտահայտություններ. «Այդ պահին նրա **քքերը** մտավ հերկվող սևահողերի թթու հոտը» (164): «... **Քքերի** մեջ ղմղնղաց Ներսեսը...» (փոխ.՝ քքի տակ), կամ՝ «Մեր **Հայաստաններում-քաներում** մի տեղ էլեկտրակայան կկառուցես ի փառս քու հայ ժողովրդի ու կգաս», «**Քեռիմներից-մակվաներից** պրոֆեսոր բերվեց կարդալու» և այլն (332):

Արձակագրի լեզվին հատուկ է մի կարևոր առանձնահատկություն ևս. այն, որ ժողովրդաբարբառային լեզվատարրերը ներդաշնակված, միաձուլված են գրական, նաև գրքային-գրաբարյան երանգ ունեցող լեզվատարրերին: Այս ձևերը հաճախ են հանդիպում «Աշնան արև» վիպակում: Դրանց կիրառությունը ևս պատճառաբանված է: Վերոհիշյալ վիպակի հերոսուհին ոգևորության ու ինքնահաստատման պահերին դիմում է գրաբարյան ձևերին, որոնք ապահովում են խոսքի հանդիսավորությունը: Այս բառերը հաճախ է գործածում Աղունը՝ միաժամանակ իր փիլիսոփայական մտքերը, գրագիտությունը, կրթվածությունը ցույց տալու համար. «**Քանզի** մարդս ծաղիկ չի, մի անգամ է լինում ու էս մեծ հավիտենականության մեջ էլ չի լինում, էլ չի կրկնվում» (355), «**Քանզի** նրանք արժանի են կրակ տալու և ոչ թե խղճահարության»: Կամ՝ «... Այդպես միայն այուխի մեջ կլինի և չի լինի կյանքում, **գի** այուխն առանձին է, կյանքը՝ առանձին» (34):

Նշենք, որ իրենց դրևադրման ոլորտով և գործածակնության հաճախականությամբ Հր. Մաթևոսյանի լեզվում հնաբանությունները ընդհանուր գործածական բառերի համեմատությամբ սահմանափակ կիրառություն ունեն, որը և չի կարող հիմք տալ ասելու, թե հնաբանությունները ժամանակակից լեզվի համակարգից դուրս գտնվող երևույթ են. մանավանդ, երբ դրանք դիտում ենք ոճական առումով և հատկապես գեղարվեստական խոսքում ունեցած դերով:

Աղունի («Աշնան արև») գործածած գրաբարյան ձևերը որոշ դեպքերում անհատական-ք-

ճական նպատակ ունեն: Դրանց կիրառությունը այլ է «Մեսրոպը» և «Մեծամոր» վիպակներում, որտեղ համադրվում են պատմության վաղնջական և նորագույն շերտերը: Օրինակ՝ «Թուխ ու ջղալին մարդկանց մի ցեղ, որ իրեն հայ ու իր երկիրը Հայք էր կոչում. **հեթիթներին** ոտնատակ տալով. հյուսիսից իջավ **Ասորիք...**» (300): Ընդգծված պատմական բառերը ունեն որոշակի ոճական արժեք և դասվում են հնաբանությունների շարքը:

Հր. Մաթևոսյանը պատմական բառերը գործածում է մի կողմից դարաշրջանի պատմական քննարկներ վերականգնելու, մյուս կողմից հեղինակային խոսքին համոզիսավորություն, հուզաբարտահայտչական երանգ տալու համար: Հեղինակը իր ընթերցողին տանում է հինգերորդ դար՝ ականատես դարձնում գրերի գյուտի ստեղծմանը. «Այդպես Կողակ... Նրանցից մեկն ահա... կրնակահարեց արագացող վագրով **Վաղարշապատ**՝ վերջին **Արշակունի Վասնշապուհ** արքայի մոտ, թե վարդապետը... գրերը բերում է՝...»:

Ու մեսրոպյան այբուբենի տառերով գրում.

— Արարատ

— Ծիրան» (306):

Բերված օրինակներում գեղարվեստական ոճին հատուկ քերականական իրողությունների համատեղ գործածության շնորհիվ (շարահարական կապակցություններ, հարց ու պատասխան և այլն) ավելի է ընդգծվում հնաբանությունների, պատմական բառերի, հատուկ անունների ոճական արժեքը: Ինչպես օրինակ՝ **Հայք, Ասորիք, Վասնշապուհ, Ներսես Միճրականցի, Վաղարշապատ, Արշակունի** և այլն:

Հր. Մաթևոսյանի խոսքը առարկայական է ու պատկերավոր: Նա իր խոսքը երանգավորում է ժողովրդական բառուբանով: «Ծառերը» ժողովածուի ժողովրդախոսակցական բառաշերտերի քննությունը ցույց է տալիս, որ բառապաշարի հիմնական շերտը գրական համագործածական բառերն են, որոնց մեջ աչքի են ընկնում ժողովրդախոսակցական ձևերը, հարադրությունները, դարձվածքները, առած ասացվածքները, բարբառային ձևերն ու հնաբանությունները: Համագործածական բառերն աչքի են ընկնում իրենց լրացուցիչ իմաստային և ոճական երանգների հարստությամբ, իսկ ժողովրդախոսակցական բառերն ու քերականական ձևերն արտահայտում են հերոսների էությունն ու մտածելակերպը: Դա երևում է գործող անձանց լեզվական անհատականացման միջոցներում, պատկերավորման և արտահայտչական համակարգում, որոնց հնարավոր չէ անդրադառնալ մի հողվածում:

Արձակագրի խոսքը որքան պարզ է, ժողովրդայնությամբ համեմված, նույնքան տարողունակ է, ինքնատիպ ու բարդ՝ անհատական որոշակի դրոշմով:

**С. С. Кошаташви.** - **Народно-разговорные лексические слои в сборнике Г. Матевосяна "Деревья"**. - Основной слой лексики сборника "Деревья" составляют литературные общеупотребительные слова. Встречаются также народно-разговорные элементы, сложносоставные слова, фразеологизмы-архаизмы. Общеупотребительные слова часто наделены нюансами, а народно-разговорные слова и грамматические формы выражают сущность и мышление героев.

Речь прозаика отличается ясностью и народностью, но вместе с тем - емкостью и своеобразием, с отпечатком крупной личности.